

«Ցեղասպանությունն Արեւելյան Հայաստանում» գրքի շնորհանդեսը

Նոյեմբերի 11-ին Հայաստանի ազգային գրադարանում տեղի ունեցավ Սերգեյ Ավագյանի «Ցեղասպանությունն Արեւելյան Հայաստանում» գրքի շնորհանդեսը: Շնորհանդեսի շրջանակում Սերգեյ Ավագյանը Հայաստանի ազգային գրադարանի եւ Հայոց ցեղասպանության թանգարան—ինստիտուտի կողմից արժանացավ շնորհակալագրերի, ինչպես նաեւ պարգևատրվեց Հայաստանի ժուռնալիստների միության «Հավատարիմ մասնագիտությանը» մեդալով: «Ցեղասպանությունն Արեւելյան Հայաստանում» աշխատությունը պատմում է թուրքական իշխանությունների կողմից Արեւելյան Հայաստանում կատարված ոճրագործությունների մասին:

Միջոցառմանը ներկա էին, և իրենց շնորհակալակական խոսքերն ասացին բանահավաք, ցեղասպանագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վերժինե Սվազյանը, Ազգային գրադարանի փոխտնօրեն Ռաֆիկ Ղազարյանը, պատմաբան, վերլուծաբան Ռուբեն Նահատակյանը, գրող, հրապարակախոս Հակոբ Սրապյանը, թատերագետ Բախտիար Հովակիմյանը, Համլետ Նահատակյանը: Միջոցառումը ավարտվեց հեղինակի շնորհակալական խոսքով: